

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ՀԱՅՔ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԵՄՍԵԱՅ

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ
Տարեկան բաժնեգրին է կանխիկ
երկու տոլար (տասն ֆրանք)
Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

ԽՐԱՏԱՐԱԿԱՆ ՆՇՄԱՐԲ

ՀԱՅՔԻ ներկայ թիւը 3,000 օրինակ կը տպուի: Հետաքրքիր ենք տեսնել թէ մեր Հայ բաժանորդներու թիւը պիտի աւելնայ այն համեմատութեամբ որով կ'աճի ՀԱՅՔԻ ծախքերը:

Մեր երիտասարդներէն ոմանք յօժարու-թիւն կը յայտնէին տարեկան 4 տոլար վճարել եթէ ՀԱՅՔԸ 15 օրն անգամ մը հրատարակուէր նորէն: Ո՛ւր են այդ մեր եռանդուն եղբայրները: ՀԱՅՔԻ բաժա-նորդագիրն է տարին 2 տոլար կամ 10 ֆրանք, ԿԱՆՆԻԿ:

Թղթադրամ պարունակող նամակնե-րըն պէտք է ապահովագրել:

Օտար երկիրներէ դրամ կրնայ յղուիլ Գոէտի Լիօնէի փոխանակադրով, կամ Մը-նի Օրտրորով (Money Order), կամ Ֆռան-սական Դէմպոն փաստով:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀՈԳԻ

ԵՒ

ՎՐԷՓԻՆՆԴՐՈՒԹԻՒՆ

(Ամգլիերէմիմ թարգմանութիւնը)

Հայաստանի ահաւոր ջարդերուն և աւերմանց ի տես՝ շատ Բրիտանեայներու յուշ եղած պէտք է լինին 187րդ Սաղմոսին խօսքը.

“Ո՛վ Բաբելոնի թշուառական դուստրը, Երանի՛ անոր որ քեզի կը հատուցանէ մեզի արածներուդ փոխարէնը: Երանի՛ անոր որ քու զաւկներդ կը բռնէ եւ քարի կը դարնէ:”,

Կրնա՞ն արդեօք այսպիսի խօսքեր քրիստոնեայ սրտէ բղխիլ: Շահեկան կը լինէր գիտնալ թէ այս մասին ի՞նչ է զգացումը այն Հայ կնիկներուն որք իրենց էրիկներուն, ուստե՛րաց, եղբարց և Հայրե-րուն ամենասուկալի կերպով անդամատուի-ր ու մորթուիլը տեսան, իրենց տանց հրկի-զումը, և որք ամեն ինչ կորուսանելէ յետոյ տակաւին յարեալ կը մնան Բրիտոսի: Կը կարծեմ թէ նոքա Աստուծոյ օրհնութիւնը կը մաղթեն իրենց թշնամիներուն համար: Սակայն Աստուծոյ օրհնութիւններն Հազար ու մէկ կերպով ու ձևով կը շնորհուին: Խելացի քրիստոնեայ մը,

այս տուեալ դէպքին մէջ, օրհնութիւն ասելով «անպատժութիւն», ասել չուզեր: Բարոյական ինչպէս նաև քաղաքական՝ ամենամեծ աղետը որ կրնայ պատահիլ Սուլթանին և իւր հետևողաց՝ պիտի լինէր անպատիժ մնալը: Ապտիւլ-Համիտ որ կ'երևակայէ թէ խորին քաղաքականութիւն մը ի գործ կը դնէ զՀայս կործանելով՝ կը կործանէ իւր հետևողաց ընդհանուր պատկառանքը օրէնքի նկատմամբ և կը քանդէ իւր իսկ իշխանութեան հիմունքը: Այս բանը անշուշտ ակներև էր Հանգուցեալ Լօպանօֆի, Ռուսիոյ արտաքին Գործոց Նախարարի, որոյ քաղաքականութիւնն էր չքարընդոտնել և չթողուլ որ ուրիշ ու ինչէ՞ Տէրութիւն քարընդոտնէր Սուլթանը՝ զՕսմանեան կայսրութիւնն յիւր վերջնական անկումն գահավիժելէ:

Այժմ կը լսենք թէ Ռուսիա, Մեծն Բրիտանիա և Ֆրանսա Համաձայններ են Արևելեան խնդրոյն նկատմամբ: Հանրութիւնը դեռ անիրազէկ է միջոցներէն որոց մասին Համաձայնութիւնը գոյացած է, սակայն սաչափը կարող ենք այժմէն դրականապէս յայտարարել որ եթէ Համաձայնութիւնը բռնադատիչ միջոցներ չի պարունակէր, բոլորովին սնամէջ է: Անկարելի է կարգ և խաղաղութիւն վերահաստատել ի Թուրքիա առանց արդարութեան զգացումը անդ զօրացունող միջոցներ ձեռք առնելու, և անկարելի է արդարութեան զգացումը զօրացնել առանց պատժելու «յՄեծ Մարդասպանն», ու իւր գլխաւոր օժանդակները: Այն արիւնհարբու խաժամուժին որ ընդ Հայաստան և ընդ Փոքր Ասիա աւեր սփռեցին, քանի մը Հազար առաջնորդները պէտք է գլխատուին ինչպէս 1861ին Սիւրիական կոտորածին առաջնորդները գլխատուեցան:

Դժուարութեան կարգադրութեանը մէջ Մեծ Մարդասպանը գործիչ և պայմանագիր մը ունենալ կը լինի բացարձակ անյաջողութիւն: Եւրոպական քաղաքագէտներուն կողմէն ողջմտութեան ողբալի պակասութիւնը պիտի մատնէ ու իցէ փորձ բարեկարգութեան փորձել ա՛նդ ուր անպատիժ կը մնան գլխաւոր գործիչքն քան զամենայն զարհուրելի տեսարանաց որոց երբէք ականատես եղած է մարդկութիւնը:

Ողջամիտ քաղաքագիտական տրամախոհութիւն ու քրիստոնէական ոգին կա-

տարելապէս Համաձայն են: Քրիստոնեայ Տէրութեանց Համաձայնութիւնը բան մը չ'արժեք եթէ արդարութեան սկզբանց վրայ հիմնուած չէ:

Պարո'ններ, գլխատեցէ՛ք մարդասպաններն եթէ անկեղծօրէն կը բաղձաք բարեկարգութիւններն ի գործ դնել:

Ի՞նչ կ'ՈՒՋԷ ՌՈՒՍԻԱ

Ձարերու կայսրութիւնը, թէև ահագին, ստացած չէ ցամաքի և ծովու այն կանոնաւոր Համամատուցութիւններն որք զօրաւոր և առողջ կազմութեան մը Համար Հարկաւոր են: Ռուսիա չուզեր որ Թուրքիա անդամատուի և բաշխուի իրեն, Աւստրիոյ, Յունաստանի, Անգլիոյ և Ֆրանսայի մէջ: Այդ խոշոր զօրութիւններն իրեն մօտէն դրացի կը լինին այդպէսով և իրեն շարժումներուն արգելք կը հանդիսանան: Աւելի կը սիրէ որ Հայաստան, Փոքր Ասիա և Կ. Պոլիս իրեն իշխանութեան ներքև իյնան, որպէս զի այսպէսով շիտկած լինելով իւր սահմանազուխները որպէս կը վայելէ այդպիսի մեծ կայսրութեան մը, այնուհետև ապահովապէս դէմ առ դէմ նայի Եւրոպայի:

Ռուսիոյ բաղձանքն ու պէտքն այս լինելով՝ նա չուզեր նաև որ Տէրութեանց Հտաքական հսկողութեան ներքև առնուի Օսմանեան կայսրութեան ներքին վարչութիւնը և կարեւոր բարեկարգութիւններ մուտ գտնելով՝ կեանք և ոյժ վերստանայ այդ քայքայուող երկիրը: Չուզեր զայդ, նախ որ դժուար է իրագործել, և երկրորդ, որ Ռուսիոյ ասիական սահմանազլխոց մօտ կը բերէ եւրոպական մեծ ոյժեր փոխանակ թրքականին ու պարսկականին ևն:

Մոսկովին այժմու կացքը Հանդէպ Թուրքիոյ բաւական կը պարզուի այս դիտողութեանց լուսովը: Նա զԹուրքիա գորաւելու Համար պատերազմ անել չի կրնար այժմ, զի Տէրութիւններէն կասկած ունի թէ իւր յաղթութեան պտուղները յետոյ ձեռքէն կը թափեն. և միայն բարեկարգութիւններ մտցնելու սիրոյն Համար պատերազմիլ չուզեր: Ի՞նչ կ'ուզէ ուրեմն. կ'ուզէ որ Թուրքիա այս ցնցումներուն մէջ դեռ տկարանայ, ուժասպառ լինի, և վերջապէս ստիպուի ռուսական թեւարկու-

թեան տակ մասնել. այնուհետև թեւարկութիւնը կրնայ կամաց կամաց կատարեալ տիրողութեան փոխուիլ: Ասոր համար պէտք է Տէրութիւնք ասեն Ռուսիոյ—Քեզի կը յանձնենք թրքական բարեկարգութեանց ղեկը, առաջնորդողի դերը. դու արէ, մեք այո՛ւ ասենք: Այն ատեն Սուլթանը կ'առնու կամայ ակամայ այն դիրքը հանդէպ Զարին զոր առած է եգիպտոսի խտրիմը հանդէպ Անգլիական կառավարութեան: Եւ այդքանը կը բաւէ առ այժմ Ռուսիոյ: Մեզի, Հայոցս ալ կը բաւէ այդ, բայց մինչև երբ սպասելու ենք:

ՊԱՏՐԻԱՐԻՆ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ

Առնուել վերջին հեռագիրներու ամենէն կարեւորներն և տեսնենք ինչ կը նշանակեն իրօք:

Լոնտոն, 22 Դեկտ. — Հեռագիր մը կ'ասէ թէ Սուլթանը իրատէ մ'է հանած որով ներում կը շնորհէ 2,000 Հայ քաղաքական բանտարկեալներու: Նաև մահուան դատապարտուած 90 Հայերու պատիժը բերդարգելութեան կը վերածէ և կը խոստանայ թէ պիտի ազատ թողու զիրենք եթէ երեք ամիս բարի վարք ցոյց տան:

Այս գթութիւնը կը պարտին Սր. Օրմանեանի՝ նոր Պատրիարքին՝ միջնորդութեանը, որ անցեալ օր Սուլթանէն խնդրած է ողորմիլ Հայ բանտարկելոց բազմութեանը: Սուլթանը՝ հաւանած է պայմանաւ որ Պատրիարքական խառն ժողովը երաշխաւոր լինի այդ ողորմեալներուն ապագայ բարի վարմունքին համար:

Պէրլին, Դեկտ., 22. Հոս կը հեռագրեն Կ. Պօլսէն թէ Պատրիարք Օրմանեան դիտաւորութիւն ունի հրաժարիլ որովհետև չուզեր ստորագրել, ըստ պահանջման Դրան, աղերսագիր մը Հայերուն ներում խնդրելու և ապա անոնց բարի վարմունքին համար երաշխաւոր լինիլ:

Դուռն կը պահանջէ նաև որ Պատրիարքը Կ. Պօլսու դիւանագէտներուն հետ հաղորդակցութիւն չունենայ, և միայն սև միայն Դուռնէն ստանայ ամենայն հրաման ու խրատ, և ևս յայտարարէ թէ թուրք յանցանք չունէին վերջին խռովութեան մէջ:

Վերի հեռագիրը այնպէս կը ցուցնէ թէ բանտարկելոց ներում շնորհեր է Սուլթանը միջնորդութեամբ Սր. Պատրիար-

քին: Դա բոլորովին սխալ է: Համիտ, որ նոր համաձայնութեան մը զրոյց լսեր է և կասկածի մէջ է թէ գուցէ այս անգամ իրական է համաձայնութիւնը, կ'ուզէ քանի մը ճարտար շարժումներով թուցնել զիւնազիտական ջանքերը և, եթէ հնար է, արգելուլ համաձայնութեան վերջնական և բռնագատիչ պայմաններու ժամանումը:

Նաև թէ Սուլթանի այս գթութիւնը բոլորովին կեղծ է, յայտ է անտի որ անգութ և անբանաւոր պայմաններ կը դնէ Սր. Պատրիարքին վրայ: Պատրիարքն ինչպէս կրնայ երաշխաւոր լինիլ թէ ազատեալները պիտի ունենան բարի վարմունք. միթէ այդ իւր ձեռքն է, և միթէ բարի վարք չունեցողներն Պատրիարքէն կառուեն իրենց հրահանգները: Եւ «բարի վարմունք», ի՞նչ ասել է, ըստ Համիտի, զայն ալ գիտենք: Թուրքիոյ մէջ «բարի վարմունք», մէկ բան կը նշանակէ—գովել Սուլթանը: Անոր պէս բարի, իմաստուն և հպատակասէր թագաւոր չէ եղած երբէք և չպիտի լինի՝ ասել անդադար: Այսինքն, բարի վարմունք է, այս պայմանաց մէջ, կեղծաւորութիւնը, չողորթութիւնը, չարին բարի ասել, խաւարին լոյս անունը տալ: Այսինքն մարդկութենէ հրաժարիլ: Պատրիարքը կը հրաժարի իւր գթութենէն բայց չի հրաժարիլ իւր մարդկութենէն, Հայերը կը հրաժարին իրենց ամեն բանէն, որպէսզի չանկանին մարդկային արժանապատուութենէ:

Խորապէս կը համակրինք Սր. Պատրիարքին: Իւր դիրքն ամենադժուարին է: Նա ունի մրցիլ բարոյական միջոցներով այնպիսի տիրանի մը հետ զոր ոչինչ կը զսպէ երկնային կամ երկրաւոր: Պայքարը յոյժ անհաւասար է, և Պատրիարք Հայրն կրնայ ընկճիլ, բայց, վստահ ենք, պիտի ընկճի պատուաւոր կերպով:

ՖՈՒԱՆՍՍԿԱՆ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ՀԱՅՍ

Անցեալ օր Բարիզի Մատուէնէն կեղեցւոյն մէջ կիրակնօրեայ պաշտօնը Հայաստանի նուիրուած է, ընդ նախագահութեամբ մայրաքաղաքին արքեպիսկոպոսին: Կարգինալ ՌիՇԱՌ պերճախօս քարոզ մը տալով Հայոց վրայ հաւատացելոց բազմոս-

Թիւնը յուզեր է չատեր արտասուներ են : Գանձանակը ի նպաստ Հայոց պաշտպաններ է նոյն ինքն կարգինսլն, և արդիւնքն է եղեր 250 ոսկի, որուն մէջ նշանաւոր տեղ մը կը բռնէ Սր. Արքեպիսկոպոսին տուած նուէրը : Ընկերվարական, քաթուիկ, բողոքական, արմատական—ամենն ալ համակրեր են Հայոց, սական և այնպէս կառավարութիւնը կը թուի բոլորովին ազատ չզգալ ինքզինքը հանրային խղճի աղաղակին անսալու : Հարկաւ Ֆռանա չուզեր շարժիլ առանց իւր Ռուս դաշնակցին աջակցութեանը, բայց ժողովրդային հզօրացող մղումը ամեն ներքին և արտաքին դժկամակութեան յաղթել պիտի յաջողի վերջապէս :

ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՀՈԳԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Պր. Պէռնարտ ծանուցած է Անգլիական կառավարութեան թէ ինքը պատրաստ է ձրի և միահաղոյն իւր տուններուն մէջ ընդունիլ հազար հայ չքաւոր որբ : Յիշեալը յանձնախումբ մ'ունի առ այս նպատակ, և կը յուսայ թէ աւելի քան հազար երկսեռ որբերու հոգը պիտի կըրնայ ստանձնել : Արդէն քանի մը որբեր ճամբայ հանուած են դէպ Անգլիա, ուր նոքա պիտի ընդունուին գեղական ընտանիքներու մէջ :

Միացեալ Նահանգաց մէջ ալ, National Armenian Relief Committee ի ձեռքով, դրամ կը հանգանակուի այժմ յօգուտ հայ որբոց : Այս յանձնախմբին նպատակն է որբերն ինամեկ իրենց հայրենի երկրին մէջ, ոչ թէ օտար երկիր փոխադրելով : Այս է, ըստ մեզ, լաւագոյն և աւելի աժան եղանակը : Որբը իւր մօր քով կը մնայ, իւր մայրենի լեզուն մոռնալով օտար լեզու մը սովորելու չի ստիպուի, և հայ ազգին ծոցէն ու թիւէն ելած չի լինիր :

Օտար երկրի մէջ, օրինակի համար յԱնգլիա, հայ որբեր մեծցնելու կերպ մը կայ որ կրնայ օգտակար լինիլ, այն է, տանիլ մայրն ալ որբերուն հետ, և դնել զանոնք բարեկեցիկ ընտանիքի մը մէջ, որբերը դպրոց յղել ցերեկը, և նախնական կրթութենէ յետոյ արուեստ մ'ալ սովորեցնել, և ապա մայրն ու զաւակները նորէն Հայաստան վերադարձնել, ուր երթան կրթութեամբ կարող քաղաքացիներու, բարեկիրթ ընտանիքներու թիւն աճեցնել : Այդ կը լինի կոտորածներէն բարիք հանել :

ՀԱՅԵՐՆ ԻՆՏՈՐ ՎԱՐՈՒԵԼՈՒ ԵՆ

ԱՐԵՐԻԿԱՅԻ Մէջ

Տէր Խմբագիր,

Մեր Գաղթականութեան վերջն ի՞նչ պիտի ըլլայ ասանկով : Օրերս գէշ բաներ լսեցի : Հայերը ֆանելա վերմակներ են գողցեր, վերարկու են գողցեր, և չգիտեմ դեռ ուրիշ ինչ բաներ են գողցեր Սէլվէշըն Արմիի հիւրանոցէն—այն տեղէն ուր իրենց ձրի կերակուր, ձրի պառկելու տեղ, ձրի լաթ կը տրուի : Աղբ'ստաք, չէ՞ք ամչնար դուք : Ծօ՛ դուք ազգին պատիւը ցելը կը թաթխէք ասանկով : Ահա ձեր այդ անամօթութիւնը տեսնելով Ամերիկացիները պիտի ասեն հարկաւ թէ Հայերը անպիտան ժողովուրդ մըն են եղեր :

Պարոն Խմբագիր, դուք կարելի է պիտի պատասխանէք ինծի թէ քանի մը Հայու վարմունքէն բոլոր ազգը դատել սըխալ է, և Ամերիկացիք այդ սխալը չպիտի գործեն :

Ներեցէ՛ք, Խմբագիր, երանի՛ թէ ասանկ ըլլար, բայց ասանկ չէ : Քանի մը Հայ հոս, քանի կը Հայ հոն, մէկ քանի Հայ ամեն տեղ ասանկ բաներ անելով անշուշտ Հայուն պատիւը շատ պիտի ցածցնեն ամեն տեղ : Դուք կարելի է շատ չէք պըտըտիր Հայերուն մէջ, չէք լսեր թէ ինչե՛ր կը պատահին. եթէ իմ գիտցածներս գիտնայիք, կը դողայիք : Տասնաբանեայի ո՞ր պատուէրը չեն կոտորեր. մի՛ գողանա՞րը, մի՛ սուտ վկայե՞րը, մի՛...ա՞րը, կիրակին մի՛ պղծե՞րը : Հաւատացէ՛ք, Խմբագիր, շատերը ամիսներով եկեղեցի չեն երթար, և կիրակի օրը կը նստին թուղթ կը խաղան, պարապ տեղը Աստուծոյ անունը բերան կ'առնեն, անվայել բառեր ու բաներ կը զրուցեն : Ամենը ասանկ են չեմ ասեր, քա՛ւ լիցի, բայց ձեր կարծածէն շատ աւելի են : Ասոր ճարը ի՞նչ է : Ամերիկացիները կը խորհին թէ քանի որ Հայաստանի մէջ Քրիստոսի սիրոյն համար ամեն բան, տուն տեղ, կահ կարասի, մինչև անգամ իրենց կեանքը տուին մեր եղբայրները, այն նոյն Քրիստոսի սիրոյն համար մենք ալ հոս ամեն նեղութիւն յանձն պիտի առնենք, անօթի ալ պիտի մընանք, մերկ ալ, եթէ հարկ ըլլայ, բայց սուտ չպիտի զրուցենք բնաւ, գողութիւնը, մինչև անգամ ասեղ մը գողնալը մեր

մտքէն չպիտի անցնի, անհամարանք ոսկի յանձնեն մեզի, կատարեալ հաւատարմութիւն պիտի ունենանք: Վերջապէս Ամերիկայի Գրիստոնեայները անանկ կ'ակնկալեն թէ մենք իրենցմէ աւելի Գրիստոնեայ ենք, և իրենց ամենէն ճշմարիտ Գրիստոնեայներուն պէս միշտ պարկեշտ, միշտ բարի և միշտ ճշմարտախօս ենք:

Քայց երբ մեզմէ ոմանք Փանելա գողնան ու ոմանք Աստուած պաշտելու տեղ թուղթին ու թաւլուին երկրպագեն, ալ ի՞նչ իրաւունք կ'ունենանք նահատակ ժողովրդի մը զաւակները կոչուելու:

ԳՍԻԱՌԱՅԻ ՀԱՅ ՄԸ

ԿԱՐԴԱ

ՀԱՅՔԸ կարգա միշտ, եղբայր,
ՀԱՅԵՐԷՆԻ մի մոռնար:
ՀԱՅՔԸ կարգա, բարեկամ,
ՈՒՍԻՐ լեզուդ մայրական:
ԱՆՈՅՇ է հայերէն լեզուն,
Ջայն լաւ պէտք է գիտնաս դուն:
ՀԱՅՔԸ կարգա միշտ եղբայր,
ՀԱՅՈՅ աշխարհէն լուր առ:
ՆԱՄԱԿ, հեռագիր, զանազան,
ՀԱՅՔԻ մէջ շատ ու շատ կան:
ՀԱՅՔԻ մէջ կը լինի նաև
ԱՆԳԼԻԵՐԷՆ այսուհետև:
ԿԱՐԴԱ, բաղդատէ, թարգմանէ,
ՏԵՍ մէկը մէկալին նման է:
Միշտ ծոցդ պահէ ՀԱՅՔԸ,
Կառքին մէջ, թրէյնին մէջ
Համարձակ կարգա ՀԱՅՔԸ:
Թող եանքինքը տեսնեն
Թէ Հայք ալ ունին իրենց ՀԱՅՔԸ:
Այսպէս անելու համար
Վճարէ երկու տոյար,
Պարս'ն Մարկոս, Պարս'ն Մարգար,
Ի՞նչ կը մտմտաք, եղբայր,
Քայէք բերանը քսակին,
Բաժանորդ դուռէք ՀԱՅՔԻն:
Ես շատ շատ կը սիրեմ ՀԱՅՔԸ,
Ա՛ռ, իմբագիր, երկուք չէ չորս կուտամ,

Դուն ալ ինծի ՀԱՅՔԸ տուր
Ամիսն երկու անգամ:
ՀԱՅՔԻՆ ՄԱՂԹԵՄ ԲԱՐԻ ՏԱՐԻ,
ԿԵՑՑԷ ԴԵՌ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ:

Պ.

ԱՆԳԼԻԵՐԷՆԻ ԴԵՍՆԵՐ

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԴԱՍ. Բ

Կան բառեր որոց անգլիերէնն ու հայերէնը նոյնն է, հնչուծի քիչ մը տարբերութեամբ, զոր օրինակ.

Hair (Հէր) Հեր.
Door (Տօր) Դուռ, Դուռ.
Cow (Բաու) Կով.
Cat (Գէթ) Կատու.
Eight (Էյթ) Ութ.
Daughter (Տօթըր) Դուստր.
Am Եմ.
Thou Դու.
To bear (Պէր) Բեր-ել.
To cut (Բըթ) Կըտ-րել.
Minor (Մայնըր) Մանր, փոքր.
Eye (Այ) Ակ, (աչք).
Foot (Ֆութ) Ոտ-ք.
Palace (Փալէյս) Պալատ.
April (Էյփրիլ) Ապրիլ (ամիսը).
May (Մէյ) Մայիս.
July (Ճիւլայ) Յուլիս.
August (Օ'կըսթ) Օգոստոս.
September (Սէփթէմպըր) Սեպտեմբեր Էն: Էն:

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԸ

Շահեկան է ծանուցանել մեր ընթերցողաց թէ այս 1897 թուականին համար ամենէն առաջ վճարող բաժանորդներն եղան երկու հայ օրիորդներ, մին Ֆիլատէլֆիալէն, միւսն՝ Նիւ-Եօքէն: Հայաղջկան հայրենասիրութիւնը անարատ է կողմնակցական ցած կիրքերէ:

Վիճակագրութիւն Ամերիկայի Հայոց

Ամերիկայի մէջ հիմայ Հայոց թիւը քանի՞ հասած է. զայս գիտնալ ավենուալ բաղձալի է, և եթէ քիչ մը յոգնուի թիւն յանձն առնուի, վիճակագրութիւն մը կրնայ պատրաստուիլ:

Մեր մեծագոյն գաղթականութիւններն են հետեւեալ քաղաքները. Նիւ-Եօք, Ուստըր, Փրովիտէնս, Պոթթոն, Լօէլ, Լօրէնս, Ֆիլատէլֆիա, Ֆրէզնոյ, Չիքագոյ, և

այլ մի քանի: Պէտք է այդ քաղաքացի-
րաքանչիւրին մէջ յանձնախումբ մը կազ-
մուի քանի մը հոգիէ բաղկացած որ տո-
մարի մը մէջ գրէ տեղւոյն Հայոց անուն-
ներն ու գտնէ ամբողջ թիւը և յղէ խմբ-
բազրութեանս:

Ուր որ Հայերը բազմաթիւ չեն, հոն
յանձնախմբի պէտք չկայ. մեր Հայրենա-
կիցներէն մէկը կրնայ բոլորին անունները
գրել և մեզի յղել:

Կը խնդրենք որ այս գործին անմիջա-
պէս ձեռնարկուի ամեն տեղ, և արդիւն-
քը հաղորդուի խմբագրութեանս, որպէս-
զի ՀԱՅՔԻ մէջ կարենանք հրատարակել
որքան շուտով որ կարելի է թէ որտեղ
որքան Հայ կայ, և բոլոր Ամերիկայի Հա-
յոց բոլոր գումարը ինչ է:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Կ. Պօլիս, Դեկտ. 6. (Տէյլի-Նիւզէն) Դու-
ռըն հեռագիր մ'է ստացեր Բեդրեպուրկի
Օսմ. Դեսպանէն որ կը ծանուցանէ թէ
Մեծին Բրիտանիոյ և Ռուսիոյ միջև կա-
տարեալ հասկացողութիւն կայ թրքական
բարեկարգութեան վերաբերութեամբ: Այս
հաղորդագրութիւնը խորին տպաւո-
րութիւն գործեր է եւրոպայի արքունեաց
վրայ:

Այսպիսի հեռագրի մը Օսմ. Դեսպա-
նէն յղուած լինելը շուտով հերքեցին:

Ահաւասիկ ուրիշ և աւելի որոշ զրոյց
մը զոր Տէյլի-Նիւզ արժանաւոր աղբիւրէ
ստացած է եղեր:

Ռուսիա, մեծ Պետութեանց հաւանու-
թեամբը, Պիտի գրաւէ հիւսիսային արեւ-
մտեան անկիւնը որ Պոսֆորէն և Սև Ծո-
վէն կը կազմուի, և կը հասնի Պոսֆորի
մէկ կէտը, մերձ ի կէսն ճանապարհին, Պոս-
ֆորն ի վար: Նաև Կ. Պօլիսն ու Տարտա-
նէլն Եւրոպական պաշտպանութեան ներ-
քէ պիտի դրուին, սակայն պիտի մնան
Սուլթանի իշխանութեան տակ: Տարտա-
նիլի ամրութիւնք պիտի քանդուին, և
անցքը բոլորովին ազատ պիտի լինի:

Պէրլին, Դեկտ. 19. — Ռուսական դես-
պանն ի Կ. Պօլիս, որ նոր վերադարձեր է
Բեդրեպուրկէն, այսօր դեսպանախորհրդոյ
առաջին նիստն արաւ միւս դեսպանաց
հետ: Դեսպան Նելիտոֆ օսմանեան ելև-

մտից բարեկարգութեան և վարչական վե-
րակազմութեան համար ծրագիր մ'ունի
որում Մեծն Բրիտանիա և Ֆրանսա լիո-
վին հաւանած են, թէ և միւս Տէրութիւն-
ներն նուազ բացարձակապէս այո՛ են ա-
սեր: Սակայն Ռուսիա մինչև ցարդ զին-
եալ բռնութեամբ այդ ծրագիրն ի գործ
դնելու թելադրութիւն արած չունի, հա-
կառակ այն իրողութեան թէ ամեն Եւրո-
պական Կառավարութիւն քաջ գիտէ թէ
Սուլթանին վրայ ազդեցութիւն չունին
զիւրաւագիտական ճշունիքներ եթէ բնական
ուժի սպառնալեօք համեմուած չլինին, և
Տէրութիւնք կը շարունակեն Ռուսիոյ նա-
խաձեռնութեան ակնկալել լռնի միջոցնե-
րու համար:

Պէրլին, Դեկտ. 21. — Կ. Պօլսէն հեռա-
գիր մը կը ծանուցանէ այսօր թէ Երիտա-
սարդ Թրքաց կողմանէ յարոյթ մը կը
սպասուի հոն: Յիսուն երիտասարդ թուրք
սպայք ձերբակալուի խուսափեր են
քաղաքէն փախչելով, և բանակին բարձ-
րատիճան սպաներէն քանիները եւրոպի
արքունիքը տարուեր են զինուորական ա-
տենէն դատուելու: Յարքունիս Սուլ-
թանին ապահովութեան համար սովորա-
կան զգուշութիւններն կրկնապատկուած
են և պալատին մերձ գնացող ամեն կաս-
կածելի անձ կը ձերբակալուի:

Կ. Պօլիս, Դեկ. 24. — Բանի մը օր ա-
ռաջ եւմէնէն թրքական զօրագունդ մը
ի Հօտէյտա, Կարմիր Ծովուն վրայ, կառա-
վարութեան նաւը նստաւ Կ. Պօլիս երթա-
լու համար: Երբ նաւն ի Մուտանիա հա-
սաւ, Մարմարայի վրայ, ուր պէտք է ցա-
մաք ելնելով շոքեկառքով երթային ի Կ.
Պօլիս, զօրքերը բռնեցին վնասապետն և
չղթայի զարկին: Ապա իմաց տուին իրենց
զօրագլխին թէ մինչև որ իրենց յետամը-
նաց թոշակներն չվճարուէին, ամենեւին ցա-
մաք չպիտի ելնէին: Իրենց պահանջի գու-
մարն էր 700,000 դահեկան, որուն հետ
կը պահանջէին նաև զգետեղէն փոխա-
նակ ցնցոտիներուն զոր հագած էին:

Պրուսայի կառավարչին լուր տրուե-
ցաւ անմիջապէս, որ իսկոյն յղեց 150,000
դահ., զոր սահայն զօրքը մերժեցին, և ըս-
պառնացան Զմիւռնիա քաղաքն կողոպտել
եթէ ամբողջ իրենց պահանջը չհատուց-
ուէր: Ըստ որում զօրքը սպառազինեալ

էին և կատղած, վալին 500,000 դահ. յղեց միանգամայն բաւական զգեստեղէն: Ասոնք ստանալէ վերջը՝ զօրքը հաճեցան ցամաքը ոտք կոխել:

Կ. Պոլիս, Դեկտ. 18. — Շէյխիւլիսլամը, Մուհամմէտ ձէլալէտտին էֆէնտի, քաղցկեղէ բռնուած է, և կը զրուցեն թէ վիճակը անյոյս է:

Ամեն. Օրմանեան, Հայոց Նորընտիր Պատրիարքը, Դեկտ. 5ին հանդիսաւոր ունկնդրութիւն ստացաւ Սուլթանէն. այնուհետեւ Նորին Ամենապատուութիւնը պաշտօնական այցելութիւններն արաւ Բ. Դուռն:

Իգտիրէն կը գրեն ՄՇԱԿԻՆ թէ այս տեղէն դէպի սահմանագլուխը շտապով ճանապարհ կը շինուի, հարիւրաւոր գիւղացիներ բահերով կ'երթան դէպ աշխատանքի վայրը:

Վենետիկի կաթողիկոսներուն մէջ նոր յանձնախումբ մը կազմուած է ինպատակ Հայոց, գլխաւորութեամբ Կարգինալ Սարթոյի:

ԲԱՋՄԱՎԷՊ

Ամսօրեայ

Տարեկան բաժանորդագրինն է 10 ֆրանք, (երկու տոլար) Հասցէն է —

Redaction du BASMAVEP

St. Lazare, Venise, ITALIE

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Հանդէս կիսամսեայ

25րդ տարի

Տարեկան բաժանորդագրինն է, օտար երկրաց համար 17 ֆրանք կամ 3 տոլար 40 սէնթ: Հասցէն է —

M. M. MAMOURIAN,

Smyrne. TURQUIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Տարեկան բաժանորդագրինն է 10 ֆրանք, (երկու տոլար): Հասցէն է —

Redaction du HANTES,

Couvent Mechitarist.

VIENNE, AUTRIHCE

ՄՇԱԿ

Օրագիր

Տարեկան բաժանորդագրինն է 10 ռուբլի, Ամերիկայի համար 6 տոլար: Հասցէն է —

Tiflis, Redaction du MSCHAK

Կը խնդրեմք որ մընի օրաւրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օք Փիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեզ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

FACTS

ABOUT

ARMENIA

This pamphlet contains a report of the Sassoon massacre by a native refugee, the great Chester speech of Mr. GLADSTONE on Armenia and the renowned article of Dr. Dillon on the fearful condition of Armenia for many years before the late massacres.

Price 15 cents.—To right to the Editor of HAIR, 341 W. 23d St.

ՊԱՏԿԵՐԴ ԶԱՆԵԼ ՏՈՒՐ

Պատուական բայց ոչ սուղ, վարպետ լուսանկարչին քով որ կը գտնուի

ՈՒԹԵՐՈՐԴ ԷՎԻՆԻԻՆ ՎՐԱՅ

Թիւ 395

(29դ և 30դ փողոցներուն միջև)

Եւ անունն է —

THE IMPERIAL PHOTO STUDIO.

395 Eight Ave.,

New York.

FOR HOLIDAY PRESENTS

SUISS MUSICAL BOXES

Playing any number of tunes

GREAT REDUCTION

in prices of music boxes playing a limited number of tunes.

Musical Novelties, etc.

JACOT & SON

39 Union Sq.,

New York.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՆՏՈՒԿՆԵՐ

ՋՈՒԻՑԵՐԻՍԵԼՆ

Այս սմտուկները կրնան նուազել որքան եղանակ որ ուզէք. ԳՅԵՐՈՅ շատ իջեցուցեր ենք այն սմտուկներուն որք սահմանաւոր թուով եղանակներ կը նուազեն: Ունիմք ամեն երաժշտական նորեկով բան.

ԺԱԳՈՅ ԵՒ ՈՐԴԻ,

39 Union Sq.

ԺԱՄԱԳՈՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանելու թէ ճարտարապետ շոգեշարժ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաև ժամագործութեամբ երեկոյները ժամ 8էն մինչև 11 ժամացոյց նորոգելու:

ա՛ւ կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ աժան գներով: Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբարայ Հրէյից և այլ ազգաց որք կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին:

MISAK M. PHILIP,
89 Madison St., New York.

LANTELME'S RESTAURANT

40 Union Square

ՆԻԻ ԵՈՐԲ ԲԱՂԱՔՈՒՄ

Այս ճաշարանը միջին կարգի քսակներու համար ամենայարմարն է, վասն զի ֆռանսական ճարտարութեամբ կը պատրաստուին պատուական կերակուրներ: Կէս աւուր ճաշը 40 սէնթ, երեկոյեանը՝ 75: Գինին պարունակեալ է: Ամերիկացւոց ճաշարաններուն մէջ այս աստիճանի լաւ ճաշի մը համար, գոնէ կրկնապատիկը վճարելու է:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77 Էվինիու Նիւ Լորք
267 և 277 Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 Երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ. ի տպարանում, 1892ին: Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ գինուորն ինչպէս պէտք է կայնի, բարիւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուրն, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.: Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻԲ ՄԱՐՏԱ-ԳԻՏԱԿԱՆՔ»: Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք գիրենք մարզել պարտին մեր Կոնստանտնուպոլիս Գին 50 սէնթ:

HISTORY OF THE ARMENIANS IN INDIA

From the earliest times to the present day,

by MESROB J. SETH

Armenian Examiner to the University
of Calcutta

190 էջ, լաթակազմ: Գինն է 5 ֆր. 50 սթմ.

Կանխիկ վճարելի:

Դիմել Հեղինակին Հետևեալ Հասցէի.

11, Wellesley Square, E. Calcutta, India

ԱՂԱՔԱՆԻ

ԲԱՂԱՔԱՆԻ ԲԱՂԱՔԱՆԻ

ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական Խնդիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է: Հետևապէս հարցն այն չէ թէ կարո՞տ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իրրեւ ազգ: Զերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկրաւորն, բոլորք յափշտակեմ: Արտաքին ճամարիտ աշակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ ալ մեր բարձրացունեմք: Ոչ թէ բան մ'աճելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն:

Գինն է 50 «անթիւ» (10 սէնթ) 55 Երես: 1893
«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱ-ԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած:

ԱՅԵՆԱՐԾԱՆԻ ԲԱՂԱՔԱՆԻ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է Հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ԶԵՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ԶԱՐԿ, ՆԵՐԲԻՆ ՎՏԱՆԳԻ, ՅԱՂՈՒԹԻՒՆ ՕՐԷՆԻՔԻ ՈՒԺՈՎ: Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 Երես: 1893

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետևեալ գներով:

Ա. տարի,	1 տուրար	50 սէնթ	կամ	7.5 ֆր.
Բ. "	2 "	կամ	10 ֆրանք:	
Գ. "	2 "	" "	" "	
Դ. "	2 "	" "	" "	
Ե. "	2 "	" "	" "	

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն